

տարուան միջոց մը, պահելու համար քահանայ կամ եկեղեցական ,որ իրենք կ'ընտրեն անդ պաշտօնավարելու համար :

«Տրուած Ընկերութեան մեծ կնիքով, նաեւ ստորագրութեամբ Կառավարիչին, փոխ-կառավարիչին եւ յիշեալ Ընկերութեան վարչութեան երեք անդամներուն, Յունիս 22 յամի Փրկչին 1688, եւ Թաղաւորութեան չորրորդ տարին Վեհափառ Տէր Ճէյմս Երկրորդի, Շնորհիւ Տեառն՝ Թաղաւոր Անգլիոյ, Սկովտիոյ, Յրանսայի եւ Իրլանտայի, պաշտպան Հաւատի, եւն. :*)

Տակը կան նոյն ստորագրութիւնները :

Այսպիսի դերութիւններով Անգլիացիք կը ջանային սիրաշահիլ Հնդկահայ առեւտրականը՝ դա՛ն պարզապէս հետզհետէ իրենցմէ կախեալ տարր մը ընելու եւ յետոյ կուլ տալու համար :

Ընկերութեան եւ Հայ վաճառականներու յարաբերութեանց մասին կան կարգ մը արձանագրութիւններ Ընկերութեան տոմարներուն մէջ, որոնցմէ է հոս պիտի օգտուիմ այժմ :

Մեծ էր Պարսկաստանի մէջ Հայ վաճառականին ազդեցութիւնը, ինչ որ կը վկայեն Արեւելեան Հնդկաց Ընկերութեան արձանագրութիւնները, 1637-8 թուակիր :

Bruce Անգլիացի պատմաբանը, այդ արձանագրութիւններէն օգտուելով, կը վկայէ, որ Պարսկաստանի ներկայացուցիչ Mr. Gibson, երբ կը մեռնի եւ իր տոմարները կը քննելին Ընկերութեան կողմէն, կը յայտնուի, որ ան, փոխանակ իրեն վստահուած դումարները Ընկերութեան համար գործածելու, զանոնք փոխ տուած է Հոլանտացոց, որոնք հում մետաքս գնելով Անգլիական Ընկերութեան դէմ գործած են նոյնիսկ Ընկերութեան դրամով :

Սակայն, Անգլիացոց օգնութեան կը հասնի բոլորովին չափնկալուած պարազայ մը : «Հոլանտացիները, 100,000 անգլիական սթէրլինկի խոշոր դումար մը փոխ առած ըլլալով հայ վաճառականներէն եւ այս պարտքը վճա-

րելու չափ ապրանք չունենալով մղած էին այս ազդեցիկ տարրը (Պարսիկ) Արքունեաց դիմում ընելու, որպէսզի Հոլանտացիներուն մետաքս արտածելը արգելուի, մինչեւ որ իրենց վճարուելիք դումարը հատուցուի» 1) :

Յիշուած «ազդեցիկ տարրը» հայ վաճառականաց կ'ափնարկէ : Անոնք իրապէս ազդեցիկ էին :

Անգլո-Հոլանտական մարտնչումը բուռն կերպով կը շարունակուէր մինչեւ 1688-9 թիւերը : Անգլիացիները, ինչպէս տեսանք, կ'ողջէին համաձայնագրութեամբ իրենց կողմը շահիլ հայերը՝ երկմիտ խոստումներով զանոնք շրջնել ջանալով : Այս նպատակին ի կատար ածման համար էր գլխաւորապէս, որ Ընկերութիւնը Հայոց կարգ մը իրաւունքներ տուաւ :

Bruce ասիկա կը հաստատէ ըսելով թէ՛ «Քանի որ հայերը Պարսկաստանի ալ գլխաւոր վաճառականներն էին, նմանօրինակ քաջալերութիւնները անոնց ալ պիտի առաջարկուէր, մետաքս եւ Պարսմանիայի (Քիրման) բուրդ բերել Պոմպէյ, Եւրոպա զրկուելու համար, իրր մաս Ընկերութեան շահագործութեան, որուն միջոցով աւելի մեծ շահեր պիտի ունենային, քան Պարսկական արտադրութիւնները Թուրքիոյ մէջէն Հալէպ զրկելով» :

«Եթէ այս վաճառականական ձեւը կարելի ըլլայ հաստատել, կ'եզրակացնէր Գատարանը, մեծ դրամագլուխը, որ տարեկան կը զրկուի, արժէքաւոր շահագործում մը ի պահ կ'ունենայ, Եւրոպա զրկուելու պատրաստ, եւ հոն կը հասնի չուկան նախադրուելու, նախ քան Հոլանտական ներածումները հրապարակին դիները կ'ուրեն :» 2)

Անգլիացի պատմագրին տողերը պարզ ու պերճախօս են :

Վերը տեսանք ,որ անգլիացիները հայոց

1) Armenians in India, 1937, հեղինակ՝ Մ. Սէթ, ուրկէ կ'օգտուիմ յաջորդ ազբերներուն համար, Bruce.— Annals of the Honorable East India Company.— London, 1810, էջ 351 :

2) Անդ՝ էջ 617-18, հատոր երկրորդ :

*) Armenians in India.— by Mesrob J. Seth.— Calcuta. 1937.— էջ 234-38 :